ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 29-07-19

ք. Երևան «29» հուլիսի 2019 թ.

(կնքման վայրը)

"Բեռլին Պոլիկլինիկա" ՓԲԸ,

(կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը)

այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս տնօրեն՝ Ս. Հովհաննիսյանի,

(ազգանունը, անունը, պաշտոնը)

որը գործում է կանոնադրության հիման վրա,

(կանոնադրության, լիազորագրի կամ այլնի)

մի կողմից, և Ա/Ձ Շահեն Ինանց,

(կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը)

այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

*1. Պայմանագրի առարկան*

1.1. Սույն պայմանագրով՝ Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2. կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

1.2. Կատարողը պարտավորվում է մատուցել հետևյալ ծառայությունները՝ 393 ք.մ. հատակի ՊՎՔ ծածկույթի տեղադրման աշխատանքներ,(միայն աշխատանք՝ առանց նյութերի) այսուհետ՝ «Ծառայություններ» Շիրակի մարզ, ք. Գյումրի, Հաղթանակի 25 հասցեում:

1.3. Ծառայությունների կատարման ժամկետն է 29 հուլիսի 2019թ.-ից մինչև 31 օգոստոսի 2019թ.

1.4. Ծառայությունները մատուցված են համարվում Պատվիրատուի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից հանձնման-ընդունման ակտի ստորագրման պահից:

*2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները*

2.1. Կատարողը պարտավոր է՝

2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով.

2.1.2. Ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով .

2.2. Պատվիրատուն պարտավոր է Կատարողի կողմից մատուցված Ծառայությունների դիմաց վճարել սույն պայմանագրի 3-րդ կետում նշված գնին համապատասխան, Ծառայությունների հանձնման - ընդունման ակտի ստորագրման պահից 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում:

2.3. Պատվիրատուն պարտավոր է

2.3.1. վճարել մատուցված ծառայության դիմաց:

2.4. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.4.1. ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը.

2.4.2. մինչև ակտի ստորագրումը՝ ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագիրը կատարելուց՝ Կատարողին վճարելով սահմանված գնի այն մասը, որը համապատասխանում է մինչև պայմանագրի կատարումից Պատվիրատուի հրաժարման մասին տեղեկություն ստանալը մատուցված Ծառայությունների չափին:

*3. Պայմանագրի գինը և հաշվարկների կարգը*

3.1. Սույն Պայմանագրի շրջանակներում 1ք.մ. հատակի ծածկույթների տեղադրման գինը կազմում է 2 000 (երկու հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը:

3.2. Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 786 000 (յոթ հարյուր ութսունվեց հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը:

3.3. Պատվիրատուի կողմից Կատարողին վճարումները կատարվում են սույն պայմանագրում նշված Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

*4. Կողմերի պատասխանատվությունը*

4.1. Սույն պայմանագրի 1.3. կետում նշված Ծառայությունների մատուցման ժամկետը խախտելու համար Կատարողը Պատվիրատուին վճարում է տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար 0,1 տոկոսի չափով:

4.2 Տույժի վճարումը Կատարողին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պատասխանատվությունից:

4.3.Պատվիրատուի կողմից ժամանակին վճարումը չապահովելու դեպքում Պատվիրատուն վճարում է տույժ յուրաքանչյուր օրվա համար պայմանագրային արժեքի 0.1% չափով:

4.4. Կատարողը պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի տրամադրած նյութերի որակի համար:

*5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)*

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

*6. Վեճերի լուծման կարգը*

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

*7. Եզրափակիչ դրույթներ*

7.1. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված՝ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից: Սույն պայմանագրի հավելվածները դրա անբաժանելի մասն են:

7.2. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմի մոտ գտնվում է պայմանագրի մեկական օրինակ:

*8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| Կատարող | Պատվիրատու |
|---|---|
| Ա/Ձ Շահեն Ինանց | Բեռլին Պոլիկլինիկա ՓԲԸ |
| Ք. Երևան, Եղ. Թադևոսյան 12/6, 30 | Շիրակի մ., ք. Գյումրի, Հաղթանակի 25 |
| ՀՎՀՀ 40009423 | ՀՎՀՀ 05503375 |
| ՀՀ 1510029730310100 | 247260002750 |
| Արարատբանկ ԲԲԸ | Արդշինբանկ ՓԲԸ, Գյումրու մ/ճ |
| | Տնօրեն Ս. Հովհաննիսյան |